Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 5-ի N 644 - Լ որոշման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԲԵՌՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՈՂ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԲԵՌՆԵՐ ՆԵՐՄՈՒԾՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵԶԻԴԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵՌՆԵՐԻ՝ ԼԱՍՏԱՆԱՎՈՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « » ——— 20 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ ԷՆ), ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի, ով գործում է ԷՆ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՍԻ ԸՆԴ ԷՄ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս՝ տնօրեն Հենրիկ Մալերյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ երկուսը միասին կանվանվեն Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 400-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) 3-րդ կետի 1-ին ենթակետը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագիրը կարգավորում է Կողմերի փոխհարաբերությունները՝ կապված Ընկերության միջոցով լաստանավային փոխադրումների հետ:

1.2. Ընկերությունը վարձակալում է լաստանավ (լաստանավեր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող բեռների՝ Փոթի-Կովկաս նավահանգիստ-Փոթի ուղղությամբ փոխադրման կազմակերպման համար, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության տարածքից բեռներ արտահանող կամ Հայաստանի Հանրապետության տարածք բեռներ ներմուծող

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպություններին (այսուհետ՝ Շահառու) բեռների փոխադրման աջակցություն տրամադրելու նպատակով:

1.3. Շահառուներին լաստանավով (լաստանավերով) բեռների փոխադրման ծառայության մատուցման համար Ընկերությունը Շահառուներին մատուցած ծառայության արժեքն ուղղակի Շահառուներից չի գանձում, այլ այդ արժեքը փոխհատուցվում է Ընկերությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

1.4. Շահառուներին լաստանավով (լաստանավերով) բեռների փոխադրման ծառայության մատուցման արժեքը փոխհատուցվում է Ընկերության կողմից վարձակալած լաստանավի վարձավճարի արժեքի 100 (մեկ հարյուր) տոկոսի չափով, սակայն ոչ ավելի, քան Փոթի-Կովկաս նավահանգիստ-Փոթի ուղղությամբ մեկ չվերթի համար 60 (վաթսուն) մլն ՀՀ դրամ: Ընդ որում, փոխհատուցումը տրամադրվում է յուրաքանչյուր չվերթի իրականացման դեպքում:

1.5. Շահառուների կողմից լաստանավի ոչ ամբողջական ծանրաբեռնման դեպքում ոչ ռեզիդենտ կազմակերպությունների բեռների՝ լաստանավով փոխադրելու պարագայում սույն պայմանագրի 1.4-րդ կետով նշված փոխհատուցման գումարը նվազեցվում է ոչ ռեզիդենտ կազմակերպությունների բեռների՝ լաստանավով փոխադրման ծավալին համարժեք մատուցված ծառայության արժեքի չափով, մասնավորապես, մեկ բեռնատար մեքենայի հաշվով մեկ չվերթի համար 1.2 մլն դրամ, իսկ մեկ ուղղության համար՝ 0.6 մլն դրամ և մեկ երկաթուղային վագոնի հաշվով մեկ չվերթի համար՝ 1.5 մլն դրամ, իսկ մեկ ուղղության համար՝ 0.75 մլն դրամ:

1.6. Ընկերությունը լաստանավով բեռների փոխադրման համար Շահառուներից ընդունում է հայտեր և ապահովում վերջիններիս բեռների փոխադրումը լաստանավով:

2. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

2.1. Ընկերությունը պարտավոր է՝

2.1.1. Վարձակալել լաստանավ, սահմանել լաստանավի հստակ չվացուցակ, մասնավորապես, շաբաթական առավելագույնը 2 (երկու) չվերթ Փոթի - Կովկաս նավահանգիստ և առավելագույնը 2 (երկու) չվերթ Կովկաս նավահանգիստ - Փոթի ուղղություններով:

2.1.2. Ապահովել Շահառուների բեռների՝ լաստանավով փոխադրման գործընթացը և մատուցել բեռների փոխադրման ծառայությունները պատշաճ ձևով:

2.1.2. Շահառուներից ընդունել Որոշման հավելվածով նշված հայտեր:

2.1.3. Ուսումնասիրել սույն պայմանագրի 2.1.2-րդ կետով ներկայացված հայտերի համապատասխանությունը Որոշման հավելվածով ներկայացված պահանջներին:

2.1.4. Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել տեղեկատվություն Շահառուներին մատուցված ծառայությունների մասով և հաշվետվություն՝ համաձայն սույն պայմանագրի N 1 ձևի:

2.2. Ընկերությունն իրավունք ունի՝

2.2.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստանալ Շահառուների՝ լաստանավով բեռների փոխադրման ծառայության մատուցման՝ սույն պայմանագրով նախատեսված արժեքի չափով ծախսերի փոխհատուցում:

2.2.2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել Շահառուներին լաստանավով (լաստանավերով) բեռների փոխադրման ծառայության մատուցման արժեքի փոխհատուցման հայտ:

2.2.3. Մերժել Շահառուների կողմից ներկայացված հայտը՝ Որոշման հավելվածի 17-րդ կետին համապատասխան:

2.3. ԷՆ-ը պարտավոր է՝

2.3.1. Ուսումնասիրել Ընկերության կողմից ներկայացված հայտը և հաշվետվությունները:

2.3.2. Սույն Պայմանագրի 2.3.2-րդ կետում նշված տեղեկատվությունն ստանալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել եզրակացություն՝ համաձայն Որոշման հավելվածով նախատեսված N 3 ձևի:

2.3.3. ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում (www.mineconomy.am) ամսական պարբերականությամբ հրապարակել սույն Պայմանագրով նշված չվերթների և դրանց փոխհատուցման մասին տեղեկատվություն՝ համաձայն սույն պայմանագրի N 2 ձևի:

2.4. ԷՆ-ը իրավունք ունի՝

2.4.1 Ընկերությունից պահանջել և ստանալ տեղեկատվություն ու հաշվետվություն՝ համաձայն սույն Պայմանագրի N 1 ձևի:
2.4.2. Անհրաժեշտության դեպքում, ուսումնասիրություն իրականացնելու նպատակով Ընկերությունից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1. Կողմերը սույն Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

4.1. Կողմերից և ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով իր ցանկացած պարտավորությունների ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու համար, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, այն է՝ ջրհեղեղ, հրդեհ, երկրաշարժ և այլ բնական աղետներ, սույն Պայմանագրի կնքման պահից հետո ծագած ցանկացած պետական մարմինների ակտեր կամ գործողություններ, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Եթե այդ հանգամանքներից որևէ մեկն անմիջական ազդեցություն է ունեցել սույն Պայմանագրով սահմանված ժամկետում պարտավորությունների կատարման վրա, ապա պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգվում է այնքան ժամանակով, որքան որ գործել են այդ ուժերը:

4.2. Այն Կողմը, որը չի կատարում սույն Պայմանագրով իր պարտավորություններն անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով, պարտավոր է անմիջապես ծանուցել մյուս Կողմին սույն Պայմանագրի 4.1-ին կետում նշված հանգամանքների, դրանց տևողության և ավարտի մասին, սակայն ոչ ուշ, քան դրանց սկսելու և ավարտի ամսաթվից 5 (հինգ) օրացուցային օր: Ծանուցման մեջ նշված փաստերը պետք է հաստատվեն Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրված և Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի նախագահի կողմից ստորագրված, կնիքով հաստատված պաշտոնական փաստաթղթերով:

4.3. Ծանուցման բացակայությունը կամ ուշացումով ծանուցումը զրկում է Կողմին սույն Պայմանագրի 4.1-ին կետում նշված հանգամանքներից յուրաքանչյուրին հղում կատարելու իրավունքից՝ որպես իր պարտավորությունների չկատարման համար պատասխանատվությունից ազատող հիմք:

5. Վեճերի լուծումը

5.1. Սույն Պայմանագրի կատարման ժամանակ առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, որոնք կարող են անցկացվել, այդ թվում՝ նաև փոստով գրությունների ուղարկման, ֆաքսիմիլային հաղորդագրությունների փոխանակման միջոցով:

5.2. Եթե բանակցությունների արդյունքում Կողմերը համաձայնության չեն գալիս, ապա բոլոր վեճերը կարող են լուծվել նախապահանջային կարգով: Նախապահանջի քննության ժամկետը կազմում է նախապահանջն ստանալու օրվանից 30 (երեսուն) օր:

5.3. Եթե Կողմերը չեն կարգավորում վեճերը բանակցությունների միջոցով և/կամ նախապահանջային կարգով, ապա դրանք լուծվում են դատական կարգով՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

6. Պայմանագրի մեջ փոփոխություններ, լրացումներ կատարելու և դրա լուծման կարգը

6.1. Սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք Կողմերը ձևակերպում են սույն Պայմանագրին կից Լրացուցիչ համաձայնագրով:

6.2. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ Պայմանագրի լուծման մտադրության մասին մյուս կողմին գրավոր ծանուցելով Պայմանագրի լուծման նախատեսվող ամսաթվից 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ:

6.3. Սույն Պայմանագիրը համարվում է լուծված լուծման մասին ծանուցման մեջ նշված ամսաթվից՝ իրականացված բեռնափոխադրումների և մատուցված ծառայությունների հաշվարկներով Կողմերի բոլոր պարտավորությունների կատարման պայմանով:

6.4. Սույն Պայմանագիրը լուծելիս Կողմերը կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ և իրականացնում են համապատասխան վճարումներ մինչև Պայմանագրի լուծման ամսաթիվը:

7. Այլ պայմաններ

7.1. Կողմերի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, երկաթուղային տրանսպորտում գործող նորմատիվ ակտերով, ՄԲՀՀ, միջազգային պայմանագրերով և այլ համաձայնագրերով, որոնց մասնակիցներն են սույն Պայմանագրի Կողմերը:

7.2. Կողմերը պարտավորվում են չհրապարակել այն տեղեկատվությունը, որն իրենց հայտնի է դարձել սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքում, բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.3. Գտնվելու վայրի, փոստային հասցեի, հեռախոսահամարների, ֆաքսի, բանկային և այլ վավերապայմանների փոփոխության դեպքում Կողմերը պարտավոր են փոփոխության ամսաթվից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել միմյանց:

7.4. Սույն Պայմանագիրը կազմված է հայոց լեզվով, ստորագրված և կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակից՝ մեկական օրինակ Կողմերից յուրաքանչյուրին:

8. Պայմանագրի գործողության ժամկետը

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելու ամսաթվից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը (երեսունմեկը) ներառյալ:

9. Կողմերի հասցեները և բանկային վավերապայմանները

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն		**Ընկերություն՝** «ՍԻ ԸՆԴ ԷՄ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5 ՀՎՀՀ՝ 02698604 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն h/h 900011018695 **նախարար՝ Վահան Քերոբյան** _____ Ստորագր. Կ.Տ.		Հասցե՝ Քաջազնունու փ.շ/2/22 կենտրոն 0018, Երևան, Հայաստան Հեռ. քաղ.՝ +9217594083, +37455162078 Հեռ. բջջ.՝ +9217594083, +37455162078 h/h ՀՀ դրամ՝ 1510056263880100 Բանկ՝ Արարատբանկ ՓԲԸ ՀՎՀՀ՝ 00505151 Էլ. հասցե՝ **տնօրեն՝ Հենրիկ Մալերյան Փաշոյի** _____ Ստորագր. Կ.Տ.

Ձև N 1

Շահառու հանդիսացող կազմակերպությունների բեռների փոխադրման հաշվետվություն

Շահառուի անվանումը	Փոխադրման ուղղությունը (արտահանում ՀՀ-ից/ ներմուծում ՀՀ)	Բեռնափոխադրման տեսակը (ավտոմոբիլ/երկաթուղային վագոն)	Բեռի չափը (տոննա)	Բեռի արժեքը (դրամ)	Արտահանման երկիրը	Լաստանավով փոխադրման արժեքը	Արտահանումը/ ներմուծումը հավաստող փաստաթղթերի համարները (կցվում են պատճենները)

Շահառու չհանդիսացող կազմակերպությունների բեռների փոխադրման հաշվետվություն

Շահառու չհանդիսացող կազմակերպության անվանումը	Փոխադրման ուղղությունը (արտահանում ՀՀ-ից/ներմուծում ՀՀ)	Բեռնափոխադրման տեսակը (ավտոմոբիլ/երկաթուղային վագոն)	Բեռի չափը (տոննա)	Լաստանավով փոխադրման արժեքը

Ձև N 2

Տեղեկատվություն

ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 400-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում իրականացված չվերթների և տրամադրված փոխհատուցման վերաբերյալ «__» _____ 20__ դրությամբ

Չվերթների քանակ	Փոխադրված բեռներ						Տրամադրված փոխհատուցման չափը, հազ. դրամ
	Ներմուծում, տոննա	Արտահանում, տոննա	Ներմուծում մեքենա, հատ	Արտահանում մեքենա, հատ	Ներմուծում վագոն, հատ	Արտահանում վագոն, հատ	
1.							
2.							
3.							
…							

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ